ԿԱՐԼԵՆԵ ՉԱՉԱՆԻ

ԱՐԺԵՔԱՎՈՐ ՎԱՎԵՐԱԳՐԵՐ ՀԱՅ-ՔՐԴԱԿԱՆ ԲԱՐԵԿԱՄԱԿԱՆ ԿԱՊԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Հայ և քուրդ ժողովուրդների բարեկամության հարցը ունի քաղաքական և գիտական կարևոր նշանակություն։ Այդ բարեկամությունը գալիս է դարերի խորքից, խարսխվում սոցիալ-տնտեսական, պատմական խոր արմատների վրա։ Հայ ու քուրդ ժողովուրդների բարեկամության ստեղծման, նրանց փոխադարձ մերձեցման ծիլերը հիմնված են պատմական նույնանման ճակատագրի խորը ընդհանրության վրա և աճել ու ամրապնդվել են առաջին հերթին ներքին և արտաքին թշնամիների դեմ մղված համատեղ ու հերոսական պայքարում։

Հայ քրդական զինակցական դաշինքի, համատեղ պայքարի ու ազատության գաղափարը մտահոգում էր բախտակից երկու ժողովուրդների առավել զարգացած ու լայնախոհ ներկայացուցիչներին, մտավորականներին, գրողներին, հրապարակախոսներից շատերին, Օսմանյան Թուրքիայի անտանելի լծի դեմ ելած ժողովուրդների ազատության գործին բոլորանվեր գործիչներին։ Ինչքան ուժեղանում էին աշխարհավեր սուլթանների ճնշումներն ու հպատակների խոշտանգումները, բռնություններն ու կոտորածները, այնքան գործնական գետնի վրա էր դրվում ոչ միայն միևնույն ազգի տարբեր դասերի, այլև օտարի լուծը հավասարաչափ կրող հայերի ու քրդերի բարեկամության, համատեղ պայքարի գաղափարը։

Ինչպես հայ մտավորականության բազմաթիվ ներկայացուցիչներ՝ Հովսեփ Էմինը, Մուշի վանահայր Հովնան եպիսկոպոսը, Խրիմյան հայրիկը, հայ ազատագրական շարժման ղեկավար գա-

ղափարախոսներ Խ. Աբովյանը, Գր. Արծրունին, Նորատունկյանը, Պեշիկթաշլյանը, Մ. Մամուրյանը, Գր. Չիլինկիրյանը, Հ. Սվաճյանը, Մ. Տիգրանյանը և շատ ուրիշներ, այնպես էլ քուրդ բազմաթիվ գործիչներ Եզդանշիրը, Աբդուլ Ռազակը, Մոկսի Մուրթլա բեկը, Բեդրխան բեյի որդին, «Քրդստան» թերթի խմբագիր Աբդուլ Ռահմանը, քուրդ-եզիդիների կրոնապետ Միր-Իսմայիլ բեկը, շեյխ Սայիդը և շատ ուրիշներ, ամենուր պայքարել են հայ-քրդական բարեկամական մշակութային կապերի, նրանց զինակցական դաշինքի ամրապնդման համար։

XIX դարում և XX դարի սկզբներին հայ-քրդական դաշինքի ջատագովները գործնական քայլերի դիմեցին։ Հայերն ու քրդերը հաճախ հանդես էին գալիս օսմանյան բռնակալության դեմ, բազմիցս նրանց միասնական ուժերով կասեցվել են թուրքական բռնակալության ոտնձգությունները։ Հայ և քուրդ ժողովուրդների ֆիզիկական բնաջնջման մղձավանջային օրերին բազմաթիվ հայեր ապաստան են գտել քրդերի մոտ և փրկվել թուրքական յաթաղանից։ Օրհասական այդ օրերին հայերը ևս բազմիցս իրենց բարեկամական ձեռքն են մեկնել քրդերին։ Այդպիսի բարեկամության ցայտուն օրինակներ կան հատկապես Դերսիմի, Շատախի, Վանի, Դիարբեքիրի, Մոկսի հայերի ու քրդերի մոտ[1]։

Հայ և քուրդ ժողովուրդների բարեկամության մասին Լեոն գրում է. «...Դարավոր մոտիկ հարաբերությունները, անշուշտ, փոխադարձ, ուժեղ ազդեցություն են տարածել երկու ազգությունների միջև, նույնացնելով նրանց կուլտուրական կյանքի շատ երևույթներ...։ Դեռ հին ժամանակներից Հայաստանի արևելյան ու հարավային մասերում ստեղծվել էր մի կուլտուրական միջավայր, ուր հայերն ու քրդերը փոխադարձ շփումներով ու ազդեցություններով հարում էին մի ընդհանուր համայնական աշխարհայացքի, մի ընդհանուր կարգի»[2]։

Հայ հեղինակներից մեկ ուրիշը գրում է. «Տաճկական Հայաստանի աշխարհագրական դիրքը և դարավոր հայրենակցությունը հայ և քուրդ տարրերի միջև ստեղծել են հարաբերական այնպիսի գծեր, որոնք այդ երկու տարրերին շատ բանով դարձրել են համանման, միատիպ»[3]։

---

[1] «Լումա», 1903, № 1, էջ 99։

[2] Լեո, Հայոց պատմություն, հատ. 2, 1947, էջ 661։

[3] Մ. Տ. Շվոռ, Քրդերը Տաճկահայաստանում, հատ. Ա, Պետերբուրգ, 1905, էջ 5։

Իսկ քուրդ նշանավոր պատմաբան, ազգագրագետ Մահմուդ Բայազիդին գրում է. «Այն քրդերը, որոնք բնակվում էին հայկական գյուղերում, մոտ հարաբերության մեջ էին հայերի հետ»[4]։

Հայ-քրդական բարեկամական կապերի պատմությունից կարելի է բերել բազմաթիվ և բազմապիսի դրվագներ։

Ճիշտ է, թուրքական կառավարությանը հաջողվեց սեպ խրել հայ-քրդական բարեկամության մեջ և մութ ծալքեր թողնել այդ երկու հարևան ժողովուրդների պատմության մեջ, սակայն ինչպես հայ, այնպես էլ քուրդ մտավորականության առավել առաջադիմական ու լայնախոհ գործիչները միշտ էլ ջանացել են ամրապնդել բախտակից այդ երկու ժողովուրդների բարեկամությունը, մերկացրել են թուրքական մարդակուլ քաղաքականությունը և ցույց տվել, որ այդ երկու ժողովուրդների ազատագրության ուղին պետք է խարսխվի նրանց բարեկամության դաշինքի վրա։

Պետք է նշել, որ հայ-քրդական բարեկամության դրվագների մասին կան բազմաթիվ անտիպ աղբյուրներ, որոնք գալիս են լրացնելու առ այսօր քիչ ուսումնասիրված այս կարևոր հարցը։

Վերջերս Մատենադարանում մեր ուսումնասիրությունների ընթացքում հանդիպեցինք մի շարք փաստաթղթերի՝ գիտնականների, գրողների, ճանապարհորդների ուսումնասիրությունների ու հիշողությունների, որոնք հարուստ նյութ են պարունակում հայ և քուրդ ժողովուրդների տնտեսական, մշակութային, զինակցական կապերի մասին։ Հարկ ենք համարում կանգ առնել հատկապես երկու ուշագրավ վավերագրերի վրա, որոնք վերաբերում են քուրդ եզիդիների հոգևոր առաջնորդ Բեյս-Ամիր Ապտի Բեգ զադե Միր Իսմայիլ բեկին, որը եղել է հայ-քրդական բարեկամության ամենափայլուն ջատագովներից մեկը։ Նրա աթոռանիստը գտնվում էր Լալեշում (Հյուսիսային Իրաք)[5], սակայն, նա միշտ էլ կապեր է

---

[4] **Мела Махмуд Баязиди**, Нравы и обычаи курдов, М., 1963, стр. 52.

[5] Լալեշ գյուղը գտնվում է Մոսուլից 70 կմ հեռավորության վրա, որտեղ մինչև օրս պահված է եզիդի քրդերի տաճարը և Շեյխ-Ադիյի գերեզմանը։ Պատմագրության մեջ հայտնի է, որ վերջինս ապրել է 13-րդ դարում, իսկ որոշ պատմաբանների կարծիքով՝ 7-րդ դարում և համարվել է համայն եզիդիների հոգևոր առաջնորդը։ Ներկայումս Շեյխ-Ադիյի գերեզմանը հանդիսանում է ուխտատեղի։

Լալեշ գյուղի եզիդի քրդերի տաճարին կից գոյություն ունի վանական միաբանություն։ Այստեղ պահված են եզիդիների սուրբ գրքերը՝ գրված 13-րդ դարում։ Նրանցից մեկը կոչվում է «Քտեբա Գիվլան» (Գիրք սրբության), ուր շարադրված է եզիդիների պաշտամունքը, իսկ մյուսը՝ «Մախսաֆե ռաշն» է (Սև գիրք), որտեղ նկարագրված է եզիդիների կենցաղը։ Հայտնի է, որ

պահպանել Օսմանյան կայսրության և Ռուսաստանի եզիդիների հետ, հետաքրքրվել նրանց կյանքով, ջանացել է եզիդիների մեջ տարածել լուսավորություն, նրանց բացահայտել թուրքական կառավարության մարդակուլ քաղաքականությունը։ Նա Արևելյան Հայաստանում բնակվող եզիդիների ճակատագիրը կապում էր ռուս և հայ ժողովուրդների հետ, միաժամանակ ամենուր ջանալով ամրապնդել հայ և քուրդ ժողովուրդների բարեկամությունը։ Նրա գործունեությունը շեշտված թշնամանքով էր ընդունվում թուրքական կառավարության կողմից, որի պատճառով էլ ենթարկվում էր հալածանքների, իսկ երիտթուրքերի կառավարման շրջանում նա ձերբակալվել ու բանտարկվել է[6]։

Միր Իսմայիլը մեկն էր նրանցից, որոնք գտնում էին, որ քուրդ ժողովուրդը խավարից և մոլորումներից կարող է դուրս գալ լուսավորվելու, քաղաքակրթվելու միջոցով։ Նա մեծ նշանակություն էր տալիս հայ մտավորականության գործունեությանն այդ ուղղությամբ։

Նրա երազանքն էր այցելել Արևմտյան և Արևելյան Հայաստան, մոտիկից ծանոթանալ քուրդ-եզիդիների կյանքին, ուժ ու

7-րդ դարում, արաբական արշավանքների ժամանակ, քրդերը բռնի կերպով ենթարկվել են մահմեդականացման և այդ նույնը շարունակվել է 16-րդ դարում։ Քրդերի այն մասը, որը չընդունեց մահմեդականությունը, մնաց որպես հեթանոս և հայտնի են եզիդի անունով։

19-րդ դարի առաջին կեսին օսմանյան կառավարող շրջանները եզիդիներին սկսեցին ենթարկել հալածանքի։ Այդ առթիվ Խ. Աբովյանը գրում է «...նրանք (եզիդիները—Կ. Զ.) այժմյան Թուրքիայի Կեսարիա և Ադանա նահանգների միջև ընկած հարթավայրում, Զեյթունի և Մարաշի շրջաններում, մինչև Ռաշիդ փաշայի ներխուժումը, մոտավորապես 19 տարի առաջ կազմել էին ինքնուրույն իշխանություն և շարունակ դիմադրում էին իրենց հարևաններին և իրենց վրա հարձակվողներին։ Բայց այդ փաշան, որը քրդական ցեղերի մի մասը ամբողջովին ոչնչացրել էր, որոշ մասը ցրել, իսկ մնացածներին ստիպել նստակյաց կյանք վարել և հարկ վճարել Բարձրագույն Դռանը, շատ ավելի սարսափելի և դաժան վարվեց եզիդիների հետ, որովհետև բացի այդ ամենից, սրանցից անխղճորեն պահանջում էին հավատն ուրանալ։ Եզիդիներն արիաբար դիմադրում էին իրենց գայթակղիչների բոլոր փորձերին ու գրոհներին, մասսայաբար զոհվում էին հայրենական կրոնի համար, միայն մի քանի թուլամորթներ թույլ տվին իրենց մահմեդականացնելու, իսկ մյուսները, որոնք դեռ կենդանի էին մնացել, տեղափոխվեցին մեծ մասամբ Հայաստանի ռուսական մասը և այստեղ ամեն տեսակետից հանգիստ ու խաղաղ վայելում էին կատարյալ ազատություն» (Տե՛ս Խ. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 8, Երևան, 1958, էջ 262)։

6 «Տարազ», 1913, № 1, էջ 18։

եռանդ տալ հայ-քրդական բարեկամական կապերին։ Ինչպես «Տարազն» էր նշում, հայ-քրդական բարեկամական կապերի այդ տարիների շարժման ոգին երիտասարդ Միր Իսմայիլն էր[7]։

Եվ ահա 1908 թ. նա գալիս է Պոլիս, ապա անցնում Մոսուլ և կոչ անում քուրդ-եզիդիներին բարեկամական սերտ կապերի մեջ մտնել հայերի հետ։ Եզիդիները սիրով են ընդունում այդ առաջարկը։ Նրա անմիջական գործունեության շնորհիվ հայ հոգևորականության կողմից միջոցառումներ են ձեռնարկվում լուսավորություն տարածելու եզիդիների շրջանում, նրանց քաղաքակրթելու, ցույց տալու հայ-քրդական միասնության և բարեկամության անհրաժեշտությունը[8]։

Բայց շուտով տեղական իշխանությունները տեղեկանում են այս բոլորի մասին[9] և ամեն կերպ ջանում են խաթարել հայ-քրդական կապերը։

Սակայն Միր Իսմայիլի ջանքերը ապարդյուն չեն անցնում։ Նա համաձայնության է գալիս Դիարբեքիրի հայ համայնքի առաջնորդ Զավենի հետ, որպեսզի լայն լուսավորչական աշխատանք տարվի քուրդ-եզիդիների մեջ։ Դրանից հետո հայ հոգևորականության միջոցով սկսվում է այդ պատվաբեր ու շնորհակալ աշխատանքը։ Այդ մասին «Արարատը» գրում է. «...Եզիդիների ըստվար թիվը հայոց հետ համերաշխությունը ապահովելը շատ կարևոր խնդիր մը նէ, մասնավորապես Տիգրանակերտի հայության համար»[10]։

Վերոհիշյալ ուղևորությունից հետո Միր Իսմայիլին հաջողվում է մեկնել Ռուսաստան։ 1908 թ. վերջերին գալիս է Էջմիածին, ներկայանում Գևորգ արքեպիսկոպոս Սուրենյանին[11], ջերմ ընդունելություն գտնում ինչպես նրա, այնպես էլ հայ մտավորականության կողմից։

Լինելով կրթված անձնավորություն (ի դեպ մայրենի լեզվից բացի նա տիրապետում էր թուրքերենին ու արաբերենին) և լայն նշանակություն տալով լուսավորչական աշխատանքին, նա ձգտում է Էջմիածնի միջոցով մի քանի ուսումնարաններ բացել քրդերի համար։ Նրա այդ ձգտումների մասին կարելի է գաղափար կազ-

---

7 Նույն տեղում։

8 «Արարատ», 1910, էջ 513—514։

9 Նույն տեղում։

10 «Արարատ», 1910, էջ 513—514։

11 «Տարազ», 1913, № 1, էջ 18։

մել այն հայատառ քրդերեն նամակի հայերեն թարգմանությունից, որ նա էջմիածնից Կոստանդնուպոլիս մեկնելուց առաջ ներկայացրել է հայոց հայրապետության տեղակալ Գևորգ արքեպիսկոպոս Սուրենյանին։ Նամակը տպագրվել է «Տարազում», որը հարկ ենք համարում մեջբերել որոշ կրճատումներով. «Իրավատեր է ժողովրդապետ հայրիկի տեղակալ Գևորգ Սուրենյան։ Ես կկամենայի, որ ամեն մի եզիդի քո մոտ գալիս դու, առհասարակ, նրան հայ համերեիր և խորություն չդնեիր, թե սա հայ է, նա եզիդի։ Ես կցանկանայի եզիդիներին մի պատվեր թողնել, որ ամեն ժամանակ հայոց եկեղեցուն ծառայեն, ինչպես մեր տանը, ինչպես Մարգարեի և ինչպես Աստծո տանը։ Խնդրում եմ Աստուծուց, որ այս տունը հաստատ մնա, ինչպես հայերի, այնպես էլ եզիդիների համար։

Հուսով եմ, որ քո օրհնությունը կլինի հայերի և իմ վրա։ Տեր աստված տա, որ դու քո ծառայության մեջ պարզերես լինես։ Ես շատ շնորհակալ եմ ինձ ցույց տված հյուրասիրության համար։ Թող աստված տա, որ մեր նոր հայրիկը՝ Իզմիրլյանը, գա և իր շնորհը տարածե հայերի և բոլոր եզիդիների վրա։

Երբ Հայրիկը գա, դու խնդրի Հայրիկից մի դպրոց բաց անի Սինագում եզիդիների համար, մի դպրոց էլ Թանդուրակում դարձյալ եզիդիների համար...։

Մնամ աղոթարար և երախտապարտ հոգևոր ժառանգ եզիդիների պետի շեյխապետ Միր Իսմայիլ։

Հազար նասրդ շրլսալ Հաժդե քանոնե Դերիքլիսե—1940 թվականի քանոնի 18 էջմիածին, այնե 15 յունվարի 1909 ամիս ս. էջմիածին»[12]։

Ջերմ ընդունելություն գտնելով հայ մտավորականության կողմից և մեծ հույսեր կապելով նրանց հետ, Միր Իսմայիլը 1909 թ. սկզբներին մեկնում է Թիֆլիս և Բաթում, նպատակ ունենալով նախ տեսակցել Կովկասի փոխարքայի հետ, նրանից խնդրել օժանդակություն և աջակցություն քրդերի մեջ լուսավորություն տարածելու համար, ապա և մոտիկից ծանոթանալ Թիֆլիսում և Բաթումում բնակվող քուրդ-եզիդիների կյանքի հետ։ Նրան հաջողվում է Թիֆլիսում, Վրաստանի և Իմերեթի հայոց առաջնորդ Գարեգին եպիսկոպոս Սաթունյանցի միջնորդությամբ և ուղեկցությամբ ներկայանալ Կովկասի փոխարքա Վորոնցով-Դաշկովին։

---

[12] «Տարազ», 1913, №1, էջ 18։

Այդ տեսակցությունը դրական ներգործություն է ունենում նրա հետագա խնդիրների վրա։

Մատենադարանում պահպանված վավերագրերից է Բաթումից Մեսրոպ ուվագ քահանա Մելյանի նամակը՝ ուղղված կաթողիկոս Իզմիրլյանին։ Վավերագիրը գրված է մեկ էջի վրա. նամակի հետ է նաև Միր Իսմայիլի շքեղակազմ հասցեաթերթիկը, որի վերևի ձախ անկյունում նկարված են հրեշտակներ և կիսալուսին, իսկ մեջտեղում ռուսերեն և արաբատառ քրդերենով գրված է. «Միր Շեյխ Իսմայիլ՝ ամբողջ եզիդիների հոգևոր հովվապետ, Մուսուլից»։ Այս վավերագրից պարզորոշ երևում է, թե Միր Իսմայիլը հայ մտավորականության միջոցով հայ-քրդական բարեկամական կապերը ամրապնդելու ինչպիսի ձգտումներ է ունեցել[13]։ Հարկ ենք համարում վավերագիրը փոքր կրճատումներով մեջ բերել։

«Առ Ազգընտիր կաթողիկոսն ամենայն Հայոց Տ. Տ. Մաթեոս Իզմիրլյանի վեհափառ հայրապետ։

Եզիդիների հովվապետ Միր շեյխ Իսմայիլը այսօր մեկնում է Բաթումից առ Ձեր վեհափառության։ Կես տարուց ավելի է Կովկաս է եկած Մուսուլից այցելության իր ցրված զավակներին։ Գյուղեգյուղ, ավանե-ավան և տնե-տուն մտած տեսած է, ծանոթացած է գրեթե բոլոր եզիդիներին, գումարած է նրանց ժողովի և պատշաճավոր ու օրինական համախոսակցություններով ստորագրություն է առած անպայման հնազանդվելու իրենց հովվապետին։ Շատ լավ ընդունելություն է գտել ս. Էջմիածնում, այսպես և Կ. Պոլսում, իջած է եղել առաջնորդարանում, սիրալիր կերպով ընդունվել է Կովկասյան փոխարքայից և սրա ամուսնուց։ Երեկ եկավ Բաթում. առանց նախապես իմաց տալու պատիվ արեց նըվաստիս այցելելու. նույն երեկոյան հյուրամեծարեցի թեյով. կային մոտս և մեր ազգայիններից։ Այսօր կրկին եկավ և նրա թախանձանքով ես համարձակություն առա վրաս սույն ամենախոնարհ տողերը ուղղելու Ձեր վեհափառությանը։

Միր շեյխ Իսմայիլ 18 ամյա է, ջերմ ցանկություն ունի ուսանելու և իր հոտին լուսավորելու։ Նա դիմում է մեր լուսո խորանին՝ ս. Էջմիածնին։ Իմ պարտքը համարեցի այսօր հեռագրով լուր հասցնել Պատրիարքարանիդ Միր Շեյխի Կ. Պոլիս գալու մասին, ինքը խնդրեց այդ. երիտասարդ է, անփորձ, գալիս է ապավինված Իզմիրլյանի մեծ անունը։

---

13 Մ. Մաշտոցի անվան Մատենադարան, Մ. Ն. Իզմիրլյանի արխիվ, թղթապ. № 14, վավ. 476։

Հայկական սոսկալի ջարդերի սև շրջանում Միրի հորեղբայրը (Միրեմիրան Ալի փաշա—Կ. Զ.) ահագին օգնություն է ցույց տվել մեր եղբայրներին։ Ինքը հարուստ է, դրամի կարիք չունի, կարոտ է միայն արժանավոր մնտորի (հովանավորության—Կ. Զ.), որ լի հավատով սպասում է գտնել Ձեր փառավորանքի մեջ։

Վերստին հայցելով Ձեր ներողամտությանը, Գամլի անհուն կարոտով և երկյուղած ու սուրբ հարգանքներով մատչիլ ի համբույր աղգախնամ աջույդ։

Վեհափառ հայրապետիդ
Ամենախոնարհ ծառայ՝
Մեսրոպ ավագ-քահանա
Մելիան։

1909 թ. 21 փետրվարի
Բաթում»[14]։

Այս նամակը գտնելով և հիմնվելով «Արարատի» և «Տարազի» տեղեկությունների վրա, սկսեցինք որոնումներ կատարել Մատենադարանի ֆոնդերում, որպեսզի կարողանանք գտնել նոր նյութեր Միր Իսմայիլի և նրա հետագա գործունեության մասին։ Այս հարցում մեզ օգնեց Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի դիրեկտոր, ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս, դոկտոր, պրոֆեսոր Լ. Ս. Խաչիկյանը և Մատենադարանի աշխատակից Ա. Հ. Ադամյանը։

Որոնումների ընթացքում արժեքավոր տեղեկությունների հանդիպեցինք մեզ հետաքրքրող հարցի վերաբերյալ, որոնք անմիջապես գալիս են լրացնելու մեջբերված նյութերը և մեկ անգամ ևս հավաստիացնելու, որ հայ-քրդական բարեկամական կապերը ունեն պատմական խորը արմատներ։

Մեզ հաջողվեց գտնել նոր արժեքավոր վավերագրեր, որոնք անմիջապես կապված են Միր Իսմայիլի գործունեության հետ։

Միր Իսմայիլը Անդրկովկասից վերադառնալով Մուսուլ, շարունակում է մտահոգվել ոչ միայն Թուրքիայի տիրապետության տակ գտնվող քուրդ եզիդիների շարքաշ կյանքով, այլև Ռուսաստանի տիրապետության տակ եղած քուրդ-եզիդիների վիճակով, հայ-քրդական բարեկամական կապերով, որի համար նորից բանտարկվում է[15]։

---

14 Մ. Մաշտոցի անվան Մատենադարան, Իզմիրլյանի արխիվ, թղթ. № 14, վավ. 476։

15 «Տարազ», 1913, № 1։

Առաջին համաշխարհային պատերազմը ժամանակավորապես կասեցնում է նրա կապը Անդրկովկասի քրդերի հետ, այնուհանդերձ նա մի քանի նամակներով դիմում է Անդրկովկասի քուրդ- եզիդիներին։ Այդ ձեռագրերը կարևոր փաստաթղթեր են հայ-քրդական հարաբերությունների, թուրքական կառավարության ազդահալած քաղաքականության, հայ-քրդական լկոտորածների մասին։ Հետաքրքրական է այն փաստը, որ Միր Իսմայիլը համաշխարհային առաջին պատերազմի ծանր օրերին ամեն կերպ հոգ է տարել ինչպես իր ժողովրդին, այնպես էլ հայ ժողովրդի մի հատվածին օսմանյան բռնակալների ֆիզիկական բնաջնջումից փրկելու մասին։ Նա հաճախակի դիմել է մեծ տերությունների օգնությանը, բայց միշտ էլ նրա խոսքերը մնացել են «ձայն բարբառո հանապատի»։

Վավերագրերը գրված են հայերեն՝ 27 սմ լայնություն և 30 սմ երկարություն ունեցող թղթի վրա։ Առաջին վավերագիրը պահպանված է խնամքով և գտնվում է Մատենադարանի այլևայլ հեղինակների արխիվում[16]։ Ինչպես վավերագրի եզրերին, այնպես էլ վերջում դրված է կնիք՝ սիրամարգի նկարով (Մալաք տաwс— Կ. Զ.), արաբատառ ու լատինատառ գրով գրված է՝ «Եզիդիների հովվապետ Միր Իսմայիլ»։ Մեր ուսումնասիրություններից պարզվեց, որ այս ամբողջը մեկ նամակ չէ ուղղված քուրդ-եզիդիներին, այլ տարբեր վավերագրեր են, գրված են տարբեր ժամանակ՝ 1916 թ., 1917 և 1919 թթ.։ Բարեբախտաբար այդ նամակները, ինչպես երևում է, ժամանակին խնամքով պահպանվել են և չնայած այն բանին, որ նրանք դասավորված են խառը, այնուհանդերձ պարզորոշ վկայում են վերը նշված իրողությունները։ Ստորև բերում ենք գրեթե բոլոր վավերագրերը մի քանի փոքր կրճատումներով։

«Ամբողջ եզիտիներու ռեյիսը Ամիր Ապտի պեկ դատե Միր Իսմայիլ պեկ։ Ազգիս և զավակներուս մեծավորաց։

4—5 տարիներե ի վեր է, որ Ձեզմե որևէ լուր առած չեմ, և շարունակ մտատանջության մեջ եմ իմ զավակներուս և ազգիս համար։ Այս պատերազմի ընթացքին մեջ բոլոր նահատակողներուն համար կմաղթեմ բարձրյալն Աստվածմե շեյխ ատիի միջնորդությամբ, որ զանոնք դրախտին արժանացնե, և Մալաքե թավուզի պսակովը պսակե ամեն, իսկ կենդանի մնացածներուն եր-

---

[16] Մ. Մաշտոցի անվան Մատենադարան, այլևայլ հեղինակների արխիվ, թղթ. № 240, վավ. №3։

կար կյանք և երջանիկ օրեր պարգևի։ Եղբայրներս և զավակներս խրատս թող ըլլա Ձեզի, որ վայրկյան մը անգամ թուրք կառավարության, մուսուլման տարրին կարևորություն չտաք, բնավ չթողուք որ անոնք Ձեր մեջ մուտք գործեն, ինչու որ Ձեզի ալ հայտնի է, որ նախնիքներում Հյուսեին պեկի ժամանակ մեր եզիտի ազգը 50,000 տնվոր էինք, Ալի պեկին ժամանակ 70,000 տնվոր էինք, Էմիր Հասան պեկին ժամանակ 80,000 տնվոր էինք, Միր Հուսեին պեկի հոր՝ Միր Պըտաղ պեկի ժամանակ 90,000 տնվոր էինք, Պըտաղ պեկի հոր՝ Իմիր Զոլ փաշայի ժամանակ 130,000 տնվոր էինք, իսկ Զոլ փաշայի հոր՝ Էմիր Սուլեյման պեկի ժամանակ մենք 200,000 տնվորի չափ ազգ էինք. 200 տարի առաջ Բևանտուղքուրա քոռ փաշայն և թուրք փաշաներեն Էմիր Տավուտ փաշան այն օրուընե սկսյալ մեր ազգը բնաջինջ ըրին, եթե հայերում մեկ-երկու անգամ ջարդ տվին, մեզի տասնհինգ անգամ ավելի ջարդեր տված են։ Բռնի կերպով կիսլամացնեին, կկտրեին, կըսպանեին մինչև որ ազգերնիս այս վիճակին հասցուցին. ճիշտ ատոր համար է, որ կըսեմ բնավ երբեք կարևորություն չտաք Ձեզ դարերով նեղող, ճնշող, թուրք բռնապետին և չի միանաք... և վստահ եղեք, որ 230.000 տնվորներեն որ 1.150.000 ժողովուրդը կբաղկանար, այսօր թուրք կառավարության շնորհիվ 14.000 տուն, 80,000 ժողովուրդ, անձե բաղկացյալ կապրինք, ասիկա թող ականջնուդ օղ ըլլա, որ անոնց վրեժը լուծեք առանց խնայելու։ Բայց ասկից վերջ հույս ունեինք Աստծո և Տինի Քրիստոսի շնորհիվ յուրաքանչյուր տեղի տիրող քրիստոնյա կառավարություններու հովանիին տակ եզիտի ազգը պիտի ապրի վայելելով պատվո, ինչքի և գույքի, ապահովությամբ պիտի զարգանա և առաջադիմի։ Հիմա պատմեմ Ձեզ Սինճարի կյանքը ամբողջ պատերազմի տևողության ընթացքին։

1915 թ. թուրք կառավարությունը զարհուրանքի մատնելով ընդհանուր հայությանը, տեղահանություն հայտարարեց և քշեց թշվառ հայերը դեպի Բեսյուլ Այնի կողմերը և Տեր էլ Զօրի։ Սինճար լեռը ապաստանող թուրք յաթաղաններեն հայ և քրիստոնյա 4.000 տարրին, որ վերջը եղավ 6.000, եզիտի ազգը ասոնք ամբողջությամբ իրենց տուներուն մեջ բաժանեցին, պահեցին զանոնք իրենց ուտելիքով, հագնելիքնին անգամ հոգալով՝ որևէ մեկը թուրքին չհանձնելու պայմանով, իսկ ես մեծ պարտականություն մը վրաս առած միշտ կպտտեի մեր ժողովրդին մեջ հորդորելով անոնց, լուռ խնամեն, աղեկ պահեն, ինչու, որ աշխարհը ասանկ

չպիտի մնա, հնազանդելով պատվերիս մեր Սենճարի աղաներն ու շեյխերը, Համոռ-Շարոն, Ֆրարայի բեյիսը, Տավուտ (Մեհրբդան և Մենտրգանի) բեյիսը, Խեյրանի աշիրաթի բեյիս, շեյխ Խտբր Իպն շեյխ Աթո, հոքան աշիրաթի բեյիս Խալաֆ շեյխ Նասբր (սմոխի աշիրաթներն), բեյս Մսիխ իպն Պելլո Ապտուլլահ Նասիմ և Մալա Խալթե Շեմալ, ճեպա կողմերեն Հյուսեին Պնի Պիճես իպն սուրբ Մաթիա, ասոնք ամբողջ հայերուն խնամք տարին, դյուրություններ ցույց տվին, որ 6000 թշվառ ապաստանող հայերը կարողանան ապրիլ իրեն ապագա փառքին արժանանալու։ Անդիեն թուրք և գերման կառավարություններու, օթոմոպիլներուն և կառքերուն վրա հարձակվելով կկողոպտեին կավրեին և ձեռք անցուցած ավարովը իրենք ի իրենց բարեպաշտ հյուրերը կապրեցնեին։ 1917 փետր. 15-ին թուրք և գերման ճիվաղ կառավարության ներկայացուցիչները միասնաբար խորհրդակցելով մեզ անվանեցին իրենց մեծ թշնամիները, ինչու, որ թե հայերը կպահեն և թե մեր կառավարական Նագլիային[17] անհանգստություն կպատճառեն, ասոնք ոչընչացնելու մեկ ճարը կմտածեին քանի երբ անգլիական բանակը չէ մոտեցել, խորհրդակցութենեն երեք օր վերջ գերմանական երկու թուղթիկ (ինքնաթիռ—Կ. Զ.) սկսան տատանել Սինճարի լեռներուն գագաթը, Մսեպինե ճամբայեն կառաջանար ան, թուղթեր գրված ձգեց մեր գյուղերուն մեջ, որ այսպես գրված էր՝ մենք թուրք և գերմանացիներս Ձեզ եղիդիներիդ մեր ազգեն համարելով լավ կերպով պաշտպանած ենք և Ձեզմե զինվոր տուրք առած չենք ցարդ, իսկ դուք հակառակ մեր բարյացակամության մեր թշնամի և ոճրագործ հայր միջներիդ կպահեք, անգլիացիներու հետ թղթակցություն կունենաք, մեր նագլիաները կկողոպտեք, եթե դուք վստահելով անգլիացիներու գալստյան կընեք այս բաները, լավ գիտցեք, որ անոնց չեք տեսնիր և այս նպատակով բոլորովին կոչնչանաք, կվերջանաք աշխարհի երեսեն։

Մեր պատասխանը գրավոր կերպով արաբի մը միջոցով ղրկեցինք Մսեպին Գերման և թուրք խառն ժողովին. Դուք թուրքերդ և գերմանացիներդ մինչև հիմա իբր Աստծոյ հավատարիմ ծառաներ կապրեիք, հիմա որ պարտազանց գտնվեցաք Աստծո դեմ և անոր թշնամի հանդիսացաք, Աստված բարկացավ վրանիդ և կամք չունի որ դուք այլևս շարունակեք Ձեր թագավորությունը, տերություն՝ ըլլալէ պիտի դադարիք, ու մեզ ալ կարող չեք կոտորել այսպիսով։

---

[17] Տրանսպորտ։

Ուրեմն Ձեր թղթերու վրա ըրած, մրոտ հայտարարություն-ները չենք ընդունիր երբեք։ Մեր Օրենքի գիրքը գրած է արդեն, որ Դուք այս թվականներուն պիտի կորսվիք և մենք վստահ ենք ատոր վրա։ Աստված Ձեզ մեր գլխեն պակաս պիտի ընե։

Իսկ փետրվար 25-րդ օրը Կովկասի ճակատեն դարձող երկու ալայ զորքին միանալով Հճի Իպրայիմ պեկ հրամանատարին, ու-ենալով իրենց հետ Մուսուլի Կուսակալ Մեմուի փաշան իրեն խորհրդականներով, Քերքուքի գայմագամ Միհհետտին էֆ[18], Քեր-քուքի ժողովրդեն և Թլաֆարի աշիրաթեն 3000 հեծելազորք, Կեր-կեսի աշիրաթեն 700 հեծյալ, Ճահեշ աշիրաթեն 500 հեծելազորք, Միթևուտի աշիրաթեն 400, Մուսուլի կողմեն 1000 հեծելազորով, 12 գերմանական հինգանոց թնդանոթով և վեց լեռնային թնդանո-թով Սինճարեն 3 1/2 ժամ հեռավորության վրա Այն-Ղազալի քով բանակ դրին։ Անոնք վեց ոստիկաններով նամակ ղրկեցին մեզի գիտցնելու համար իրենց պաշտոնական հանգամանքը։ Մենք ալ՝ Սինճարի ժողովրդականներս, հավաքվեցանք քաղաքին մեջ, որ արդեն թուրք բնակչությունը օր առաջ գաղթած էր։ Թուրք բանա-կին նամակը այս շորս հոդվածը կպարունակեր. ա) Թշնամիներիս հայ և քրիստոնյա 6000 անձ երեք օրվա պայմանաժամով մեզի պիտի հանձնեք։ բ) Ձեր մոտ գտնված բոլոր զենքերը պիտի հանձ-նեք ուղածնին 8000 է։ գ) Որչափ որ գերմանական օթոմոպիլներ, կառավարական նագլիաներ գրաված ու թուրք ժողովրդի ապրանք-ներ կողոպտած եք, փոխարենը 1.000,000 ոսկի պիտի վճարեք։ դ) Ձեզմե 22 մեծ աղաներ թող գան մեր քով տեսնվինք իրարու հետ։ Այս վեց ոստիկաններու բերած նամակին միջոցին մենք ժո-ղովականներս Համոե-Շարոյին տունը սուրճ կպատրաստեինք խմելու, բերածնուն նամակը անմիջապես պատռելով ոստիկան-ներու ներկայությամբ կրակին մեջ այրեցինք, որ օգնե մեր սուրճի շուտ եփելուն։ Կարգ մը եզիտի ազգայիններ, ոստիկանները մեր-կացուցին, ձեռքերը ձիերը առին և կաշխատեն սպանելու, աղա-ները որոշեցին այդ վիճակին մեջ ղրկել զանոնք։ Ոստիկաններուն ըսինք գացեք Ձեր հրամանատարներուն բարև խոսեք ու ըսեք Տի-նի Իսլամին խնդիրը վերջ գտավ. Օսմանյան կառավարությունը ոչնչացավ, մեզ նեղելու և բնաջնջելու կարողությունը չմնաց վրան, ինչ որ ձեռքերնուդ կուգա ըրեք վաղվեն շուտ չկա, և այդ Ձեր ըսած խոսքերը չպիտի իրագործենք քանի, երբ աշխարհի վրա

---

[18] էֆ—էֆենդի։

եղիտիի շունչ կա։ Ոստիկանները գնացին դեպի բանակ, տանելով հետերնին մեր հրահանգները։

26-րդ օրը Թուրք բանակը իրեն կատաղի վայրագությամբ հարձակվեց Սինճարի վրա, որի ժողովուրդը քաղաքը ապաստանած էր։

Երկու օրվա տեղեկութենե վերջ 28-րդ օրը եղիտիներս քիչ մը նեղվեցանք Թուրք գոռացող թնդանոթներուն տակ, իսկ եղիտի կրոնականներս (եղտի Պրնի Գասլրմե Նևա) անունով մեկը, որ կյանքին մեջ բնավ կռվի մասնակցած չէր և կռվի ինչ ըլլալը չէր գիտեր, ինչու որ կրոնական է, հիշյալ կղերը մերկ սուրը ձեռքը բռնած 150 մարդով անմիջապես հարձակում գործեց Թուրք բանակին և թնդանոթներուն վրա, այս գործողությունը կկատարվի (Դարաթել), որ Սինճարի Ղասպային 3 1/2 ժամ հեռավորություն ունի, Թուրքը այս հարձակումին չը կրնալ տոկալ մեկ թաբուր[19] զինվոր կորցնելե վերջ փախուստ տվավ, Դարաթելի արևելյան կողմը երկու թնդանոթ գրավեցին, իսկ Շեյխ Եզտոն թնդանոթի հարվածով զիստինս վիրավորվելով նահատակվեցավ։ Գրաված թնդանոթները անգործածելի վիճակի մեջ ձգեցինք քաղաքեն դուրս, այս երկրորդ հարձակումով 6 թնդանոթաձիգ և 12 հեծելազորք սատկան, իսկ մեր կողմեն հիշյալ Շեյխը։ Վերջը դարձյալ Թուրքը երկրորդ ուժով մը բռնեց Սինճարի շուրջը, 24 ժամ շարունակ կռվելեն վերջ եղիտիները լքեցին գյուղաքաղաքը և գյուղերը ու լեռ քաշվեցան, Թուրք կառավարությունը առիթեն օգտվելով մտավ գյուղերը այրեց, ավերակ դարձուց, հետո լեռան բոլորտիքը պաշարեցին, ինչու որ լեռան երկայնքը 12 ժամ, իսկ լայնությունը 4 ժամե, այդ պարագային եղիտի ազգը լեռան գլուխը (Պեյտերլե), և Քերսե հավաքվեցան, ինչու որ այնտեղ լեռներու ներսի կողմը ներքնաբերդի պես ապահով է։ Եղիտիներու մեկ մասը Զըլմերա անունով ուխտատեղին հավաքվեցան և յուրաքանչյուր խումբ երկկողմեն կպատերազմեր, անձրևը կհեղեղեր։ Ուտելիքի պակասություն զգալի էր 35 օրվան պատերազմի ընթացքին միայն ոչխարի միսով բավականացանք, ճիշտ է այդ նեղության օրեն էր, որ ժողովուրդի կողմեն որոշեցավ Իսմայիլ պեկի անձնավորությունը՝ իրեն հետ ունենալով հայ փրոֆեսոր Խաչատրյան Անգլիական բանակ մեկնելով օգնության համար։ Իսմայել պեկ մեկնեցավ փրոֆեսորին հետ արաբական ցնցոտի տարազով անապատ-

---

[19] Զինվորական վաշտ։

ներեն ու ավազուտ տեղերեն անցնելով հանկարծ կհանդիպեն արաբ Դլիմի ցեղի շեյխերեն մեկուն, որ թուրք բանակի և իրենց մեջ ունեցած տարբերությունը 2 ժամե և իրենք ալ օսմանացուն կպատկանին, շեյխին անունը Բեշիտ Ապու Զեյիան է, այս մարդը, երբ մեզ տեսավ, կըսե Իսմայել պեկ, ճանչցավ ըսելով դուն եզիտի ես և ընկերդ հայ մեծավորներեն է, ես պարտավոր եմ Ձեզ Օսմ. բանակին հանձնելու, ինչու որ մահմետական օրենքը այդպես կպահանջե, կտոր մը հաց կերցնելե վերջ հազիվ երկու ժամի չափ հանգիստ մը առած էինք մեյմըն ալ զիս կանչեց շեյխին գաղտնի տեղ մը ըսելով թե եկուր շիտակը խոստովանիր դուն ո՞վ ես, ես առանց վարանելու խոստովանեցա իրողությունը ու ըսի իրեն, եթե մեզ հանձնելու ըլլաք Օսմ. բանակին կախաղանը պատրաստ է մեզի համար, և ինձմով ոչ եզիտի ազգը կավելանա և ոչ ալ կպակասի, ինչպես նաև այս հայով, որ մեր մարգարեներու կողմեն ամանաթներ են մեր քով առանք։ Ես եզիտի ազգին Շեյխ Իսմայիլ պեկն եմ թուրք բռնապետության մեզ ճնշելուն համար կերթամ օգնություն որոնելու Անգլ. կառավարութենեն։ Շեյխը պատասխանեց, ես շատ փոխստականներ հանձնած եմ Օսմանցուն և վարձատրված, քանի երբ դուն աշաիրի տեր մարդ ես, կարձակեմ քեզ և երկու ձի հատկացնելով քեզ իմ մարդիկներուս առաջնորդությամբ այս գիշեր ժամը 6-ին կղրկեմ Անգլ. բանակը, պայմանով որ կերդվիս հոս Ձեր մարգարեին անունովն, հասնես հոն, իմ մասին ալ ներում կխնդրես Անգլ. մեծազոր կառավարութենեն, որ մենք ալ դառնանք իրենց կողմը, ինչու որ թուրքեն վնասեն զատ որևէ օգտակարություն չի տեսանք։ Գիշերվան ժամը 6-ին, իրեն երկու պահակներովը ճամբա ընկանք փրոֆեսորին հետ դեպի հզոր բանակ, որ շեյխի տանեն մինչև հոն 26 ժամվա հեռավորություն ուներ։ Երբ անվտանգ հասանք մեր նպատակը իրագործելու տեղը, չմոռացանք հիշել նաև շեյխ Բեշիտը, որուն համար հիշեսցիրը կարդացվեցավ, ընտելություն գտան։ Սամարայի բանակին հրամանատարին հետ[20] տեսնվելե վերջ, Պաղտատ ուղարկվեցանք, հոն մեր ազգին և մեջերնիս ապաստանող հայության ներքին կյանքը ու անցու դարցը ամբողջությամբ պատմեցինք Մադ. Մորաշալին, փրոֆեսորը Պաղտատ ձգեցի, ճամբուն հոգնությունը անցնելու համար, ինչու որ ծերուկ էր։ Կառավարության հրամանով երկու անգլիացի սպայի հետ արաբական դարձյալ ցնցոտիներով մեկ-

---

[20] Անգլիական բանակի հրամանատար։

նեցանք դեպի Սինճար, սպաներեն մին էր քաբթն Մաներո մյուսը քաբթն Հրտսրն։ 14 օրվան ճամփորդության վերջ թշնամիի հողերը կոխտել անցնելե վերջ հասանք Սինճար, կատարեցինք մեր քննությունները, գծեցին քարտեզը լսեցին շեյխերու տված տեղեկությունները, չմոռանամ ըսելու, որ մեր հոն հասնելու օրերուն Թուրքը առ ժամանակյա հաշտություն մը գոյացուցած էր եզիտիներու հետ և երկու բաժին ուժը Քերքուկի կողմը ղրկած էր, ինչու որ անգլիացին այդ կողմի ուժը տարած էր ու կնեղեր օսմանացիին։ Եզիտիին հաշտություն ալ ուրիշ բան չէր եթե ոչ ուտելիքի պաշարի չքավորություններ թողնելով վերջը Թուրքերուն հետ կարգադրելիք գործը։ Թուրքերեն ալ ճիշտ ասոնց պես մտածած են ըսելով նախ Քերքուկը գրավինք, դյուրին է ասոնց խնդիրը։ Երկու սպաներուն հետ, Սինրդ քլուպին այրին մեջ 6 օրվան տևողության մեջ ամեն ինչ կարգադրեցինք, հարցուցին սպաները մեզի թե ի՞նչ բանի պետք ունիք և ի՞նչ կուզեք մեզմե։ Մենք պահանջեցինք՝ կուզենք 6 թնդանոթ, 3000 զենք փամփուշտներով, մեկ թապուր զորք, որ մենք ալ ունենինք 8 թապուր, որով մենք թե մեզ պաշտպանած կըլլանք և թե կարգելենք Իրաքի կողմեն թշնամին մոտենալու Զեզի։ Երկու սպաներու հետ վերադարձա Պաղտատ, անոնք իրենց բերած տեղեկությունները հաղորդեցին վերին հրամանատարին, որը շատ գոհ մնաց եզիտի ազգեն և այսպես ըսավ. այժմ, որ Ձեր ազգը հանգիստ է, Թուրքին ուժը ալ չի մնացել քովերնիդ ու չի նեղեր Ձեզ, երկու ամսի սպասումեն վերջ, մեր բանակներն ալ կհասնին Թեքրեդ այն տեղեն ամեն միջոց ի գործ դնելով Ձեր պահանջին գոհացում կուտամ։ Երկու ամիսը լրացավ Անգ. բանակը քալեց Թեքրեդի վրա, Օսմ. բանակի հրամանատարը, Ալիի Հասան փաշան էր նույն պահուն Մուսուլեն լուր ղրկեց եզիտի ազգին շեյխերուն, թե թշնամի բանակը մոտեցավ մեզի վտանգը մոտալուտ է, եկեք մեզի միացեք, օգնեցեք օսմանացի եղբայրներուդ Դուք Ձեր Իսմայիլ պեկին խոսքերուն մի հետևեք, կխոստանամ յուրաքանչյուրիդ 100-ական ոսկի ամսական, պատվանշաններ և փաշայական տիտղոսներ։ Եզիտիներու շեյխերուն պատասխանը եղավ, այս պարագաներուն եզիտիներս որևէ տերության օգնելու տրամադրություն չունեինք, և հայտնի չէ ինչ դիրք պիտի բռնինք, բայց մեյմը խորհենք, մտածենք ու կպատասխանենք։ Թեքրետի վրա քալած ժամանակին զիս հետերնին առին։ Քրներ մոտն լենլմեն ինձ ըսավ պատրաստ եղիր երեք օր վերջ մեկնելու դեպի Սինճար, ունենալով հետդ պատերազմական բոլոր պիտույքները,

ինչ որ խոստացած ենք Զեզի, ուրախության չափ ու սահման չկար, այս դերը կատարվեր 1918 սեպ. 30 թվականին, իսկ այդ երեք օրվան միջոցին աստվածային նախախնամության շնորհիվ Անգլ. բանակը հաջողեցավ գրավել Մուսուլը, այլև պետք չունեցանք ոչ զորքերուն և ոչ ալ պատերազմական մթերքներուն։ Օսմանցին հանձնվեցավ, խաղաղությունը տիրապետեց. անգլիական մեծազոր տերության շնորհիվ Սինճարին եզիտին և մեջը պատսպարվող 6000 հայ ժողովուրդը գոհունակության և փառաբանության հանգիստ շունչ քաշեցին, 35 օրվան թուրքերուն հետ ունեցած պատերազմին մեջ 75 եզիտի և 10 հայ նահատակներ ունեցանք, իսկ մեր տեսած թուրք զորքերու անկումն 285 դիակ, բացի վիրավորներեն, որոնք քաշքռտելով հետերնին տարան, մեր վնասները եղան 56 գյուղի հրդեհվիլը և 100.000 ոսկիի չափ ապրանքի կողոպուտը։ Այժմ Անգլ. կառավարության հրամանով և Սինճարի ժողովրդի քվեարկությամբ Սինճարի Բեյիս կարգվեցավ հագիմ Սեասի տիտղոսով ֆագիր Համոյի Շարոն, 1000 ռուբլի ամսական և փաշայի աստիճանով։ Ամբողջ պաշտոնյաներ և ոստիկաններ եզիտի ազգին՝ Մուսուլին և Սինճարի մեջ գտնված ազգերնիս չափազանց հանգիստ ու հարուստ կապրին խաղաղ կյանքով մը, այնքան որ բնավ տեսած չուներ։

Ցավալի պարագան մենակ սա էր, որ պատերազմին հինգ տարվան տևողության Միգեադի և Մսեպինի մեջտեղ գտնված Զլքի աշիրաթե 85 անձ կորսվեցան իրենց աղան Տոսպո Պընի խալաֆե կառնուս անոնց հետ ըսպանված է։ Իսկ Ճիզրե—Պոդան և Սղերտի մեջտեղ գտնված իրեք գյուղ Պասան գյուղերուն Պասան աշիրաթին հզիտիներն, որոնք 200 տուն և 600 անձե բաղկացյալ էին, ասոնք հայերուն՝ քրիստոնյաներուն օգնելու համար թուրքերը ջարդած են նաև զանոնք և իրենցմե միայն 32 անձ ազատված է ամբողջությամբ կին, երեխա, ծեր ու երիտասարդ սպանված են։ Օսմանցու ժամանակ մեզի մոտ ապրող կամ ապաստանող հայերը միշտ պահեցինք և անոնց զի հանձնեցինք, արդյոք դուք ալ այնպես, դուք ալ մեզի պես ըրիք, կամ ոչ առաջվանեն մինչև վերջ շարունակ օգտակար եղանք անոնց պաշտպանեցինք, մենք մեզ վնասեցինք և իրանց չի հանձնեցինք թուրք բռնապետներուն։ Ինչպես նաև Շեյխ Ատիի մեջ գտնված Սեյիտ Բեկի հովանիին տակ ապրող եզիտիները, որ Մուսուլեն 9 ժամե ասոնք ալ 2000 հայ և քրիստոնյա և կամ զինվորությունե փախչող կամ վտարագիր Օսմ. կառավարությենեն ծածուկ պահեցին, կերակրեցուցին մինչև վերջ առանց որևէ վնաս մը տալու անոնց։

Այս ամբողջ գրություններուս տեղյակ և հաստատող են նույն պարագաներուն Մուսուլի մեջ գտնվող Տ. Տ. Զավեն պատրիարք, Քիլտանի ազգին փաթրիկը և Սյուրյանիներուն Սթրան Հմդանը։

1918 դեկտ. 10-րդ

օրվա կնիքներն են»։

Այս վավերագրի անուղղակի շարունակությունն են կազմում ներքոհիշյալ երկու նամակները, որոնք բերվում են հաջորդաբար.

«Հարգելի Տիարք,

Ջահանգիր աղա Խաթիպ պեկ զատե, 1908 տարին երբ Ձեր քով կգտնվեին, Իկտիրի հայ ազգային ժողովականաց նախագահ Տիար Խաչատուր Մելիքյանի հետ միասին էջմիածին գնացինք հայր Իզմիրլյանի քանտիտաներու և Կոմիտաս[21] վարդապետի

---

[21] Հայտնի է, որ Կոմիտասը մոտ է եղել քրդական մշակույթին և հենց իրեն քուրդ ժողովրդին, հետևաբար նա չէր կարող անտարբեր լինել քուրդ ժողովրդի բազմահարուստ ստեղծագործության հանդեպ։ Եվ պատահական չէր, որ, երբ Շեխ Խմայիլը գալիս է էջմիածին, Կոմիտասը միշտ էլ լինում է նրա հետ, աջակցում նրա գործունեությանը, հատկապես քրդական դպրոցներ բաց անելու գործում։

Կոմիտասը մեծ հետաքրքրություն է հանդես բերել դեպի քրդական ժողովրդական երաժշտությունը։ Նա շրջել է քուրդ-եզիդիների մեջ, օրերով մնացել նրանց մոտ, ծանոթացել նրանց երգերին, հեքիաթներին։ Նա մասնակցել է քրդական տոնական հանդեսներին, հարսանիքներին, գրի առել ու մշակել քրդական ժողովրդական երգերը։ Կոմիտասը 1899 թ. Բեռլինում հանդես է գալիս քրդական երաժշտության մասին իր ուսումնասիրությամբ և դա համարվում է նրա դիպլոմային աշխատանքը։ Կոմիտասից մեզ են հասել նրա ձայնագրած 13 քրդական եղանակները և որոշ արխիվային նյութեր։ Գրականության և արվեստի թանգարանի Կոմիտասի արխիվի № 50 ծրարում կան 9 քրդական երգ, բոլորն էլ, բացի մեկից, գրված են հայկական ձայնանիշներով։ Վերը նշված 13 երգերը զետեղված են «Էմինյան ազգագրական ժողովածուի» 5-րդ հատորում։

Կոմիտասի կողմից քրդական ժողովրդական երգերի հավաքումն ու ձայնագրումը, նրա ուսումնասիրությունները քրդական երաժշտության բնագավառում նոր էջ բացեցին քուրդ ժողովրդի կուլտուրայի, հատկապես նրա երաժշտության զարգացման գործում։ Եվ միանգամայն ճիշտ է նշել ՀՍՍՀ արվեստի լաստակավոր գործիչ Ս. Գասպարյանը Կոմիտասի մասին համարելով նրան «Քրդական պոլիֆոնիկ՝ բազմաձայն երաժշտության պիոները։

(Տե՛ս ՀՍՍՀ գրականության և արվեստի թանգարան, Կոմիտասի արխիվ։ «Էմինյան ազգագրական ժողովածու», հատոր Ե, 1904, Մոսկվա, էջ 7։ Ս. Գ. Գասպարյան, «Կոմիտաս», Երևան, 1961, էջ 171։ Կոմիտաս, «Հայ ժողովրդական և եկեղեցական երգեր» «հոդվածներ և ուսումնասիրություններ», Երևան, 1941, էջ 11։ «Ավանգարդ», 1969 թ., № 137)։

Ջահանգիր աղան նույնպես եղել է հայ-քրդական բարեկամության ամրապնդման ջատագովներից մեկը։

ներկայության դպրոցի խնդիրը բացվեցավ, առաջարկեցին մեզի, որ մենք դպրոցներ ունենանք։ Մենք ալ ըսինք թե իրավ, որ մեր օրենքին գիրք ու գրականության հակառակ է մեղք կհամարենք կարդալը, սակայն ամեն ազգի գրքերուն հետ չէ, միայն իսլամական գրքերն են, որ մեզի մեղք է, ինչու որ անոնք մեր օրենքին հակառակ են և շատ ալ հեռու մեր օրենքեն։ Բայց ամբողջ քրիստոնյաներու գրքերը, ինչ ազգ ալ կուզեն ըլլան, անոնց գրքերը կարդալը բնավ մեղք չէ, ինչու որ «հանու-մարհաննա» որ քելտանները կըսին. «Մար-ատտա» իսկ եզիտի լեզվով կըսվի «Շեյխ Ատի»։

Այս հին օրերեն ի վեր մինչև հիմա աշխարհիս երեսը դտնված ամբողջ քրիստոնյա ազգերեն բնավ երբեք վնաս մը տեսած չենք բացի աղեկութենեն։ Ուստի իմ համոզումս անե, որ մեր օրենքը և կենցաղավարությունիս ավելի քրիստոնյաներուն մոտ է, քան իսլամներուն, ուստի Շեխ Ատիի և Թավուզի Մելիքի ներկայության կաղոթեմ և անոնց շնորհիվ իրավունք կուտամ իմ ժողովրդիս

1918 թ. մայիսի 21-ին, երբ դեռ չէր ավարտվել Սուրմալուի գրավումը, թուրքական բանակը Ալեքսանդրապոլից շարժվում է Արարատյան դաշտ և գրավում Սարդարապատ կայանը և գյուղը։ Այդ ժամանակ շրջակա հայ և քուրդ եզիդիները նախապատրաստում են դիմադրելու թուրք բաշիբոզուկներին։ Մայիսի 22-ին հայկական զորաբանակի թիվը հասնում է 4 հազարի, իսկ աշխարհազորայինները և Ջահանգիր-աղայի քուրդ եզիդիները դեռ մայիսի լույս 22-ի գիշերը Մոլաբայազետի մոտ հերոսաբար պայքարում էին թուրքերի դեմ։ Եվ հենց այստեղ էլ, ինչպես Թուրշյանն է նշում, «Ջահանգիր աղայի, 3 հարյուր եզիդիները նախահարձակ եղան Մոլաբայազետի կռվում և նվաճեցին հայ ժողովրդի անկեղծ դաշնակիցների անունը»։

Հայտնի է նաև այն, որ Ջահանգիր աղան դեռ առաջին համաշխարհային պատերազմի նախօրեին սերտ բարեկամություն էր հաստատել հայ ժողովրդի և նրա քաջարի զավակ, զորավար Անդրանիկի հետ։ Ահա թե ինչ է այդ մասին գրում Անդրանիկի զինվորներից մեկը իր հուշերում. «...հանդիպակած մի սառնորակ աղբյուրի վրա սեղան բաց անելով (Անդրանիկը իր զորախմբով պատահում է Ջահանգիր աղայի մարտիկներին և սեղան բաց անում—Կ. Զ.)՝ լեցուն բաժակներով խմում են հայ և քուրդ-եզիդի ժողովուրդների կենացը և ուխտում են մինչև մահ բարեկամներ մնալ։

Անդրանիկ փաշան և Ջահանգիր աղան աղ ու հացով երդվում են հավատարիմ մնալ իրենց ուխտին և հարկ եղած դեպքում միասին կռվել թուրքական բռնակալության դեմ։ Հասել էր բաժանման ժամը։ Անդրանիկ փաշան և Ջահանգիր աղան հրաժեշտի խոսքեր ասելով բաժանվում են իրարից»։

(Տե՛ս Հ. Գ. Թուրշյան, Սարդարապատի հերոսամարտը, Երևան, 1965, էջ 126—127, «Ռյա-Թազա» թերթի արխիվ, գործ՝ «պարտիական կյանք» բաժին, 1968 թ.։

դպրոցներ բանալու, ուսմունք սովորելու, զարգանալու և առաջադիմելու, անշուշտ կընդունինք որ մեր նախնիները զիս անարժանաբար իրենց փոխանորդը կարգած ու մեկնած են, ինչպես օր մը ես ալ պիտի ընիմ Աստծու հրամանով ու առանց մեր նախնիներու գծած օրենքեն շեղվելու, ձեռքս եղած իրավունքեն արտոնություն կուտամ ազգիս զարգանալու, լուսավորելու, բայց պայմանով, որ օրենքնիս չի խախտի և իրեն տեղն անխախտ մնա։ Գիտեք արդեն, որ դարեր առաջ ազգերնիս ցիր ու ցան, ոմանք Իսլամ Թուրքերու հսկողության տակ կապրեինք և կարգ մըն ալ արաբական հովանավորության, ազատ կյանք չունեինք, բայց հիմա, որ բարձրյալ Աստծո շնորհիվ ամբողջ եգիտի ազգս կապրենք քրիստոնյա տերություններուն հովանիին ներքև, շունչ կքաշենք, լավ հանգիստ կապրենք խաղաղ վիճակի մեջ, պետք է մտածենք մեր առաջադիմության համար, ալ բավական է ինչ որ քաշեցինք, ինչ տառապանքներ կրեցինք անուսության երեսեն և գոնե աշխարհիս վրա գտնված ամբողջ ազգություններն ալ չայպանին մեզ ըսելով, թե ազգ մը կա եգիտի անունով, որ կարդալը մեղք կհամարե, ամոթ է մեզի։

Միր Շեյխ Իսմայիլ 1919 թ. նոյ. 25
Բաղդադ»

«1917 թ. մարտի 25-ին գերմանական հրամանատարներեն մեկ հաղարապետ և մեկ հիսնապետ 80 հեծելազորով, որ Տերզորեն Մուսուլ կերթար Սինճարի գավառին մեջ իմ տունս հյուր եղավ, զիրենք հյուրասիրեցի պատվեցի մեծարեցի, կեր ու խումեն վերջ, հրամանատարը տեսավ, որ Քրիստոսի խաչելության պատկերը մեծ կտոր մը կտավի վրա նկարված, որ հայերեն մեկը նվիրված էր ինձի, հրամանատարը տեսավ ատիկա ու հարցուց ինծի ըսելով, Դուք այս Քրիստոսը կճանչնա՞ք, կդավանի՞ք, որ հոս պատը կախած եք, ես պատասխանեցի այսպես 5 հայերու և 10 եգիտիներու ներկայությամբ հայերն էին Ուրֆայի տերտերի տղան Հովհաննես, Ծրզնկացի Արամը, մյուսները ալ չեմ գիտեր ասոնք վկա են, ըսի թե մենք Քրիստոս կճանչնանք, կդավանինք և անոր կամքին համաձայն կգործենք, իսկ Դուք, որ քրիստոնյա յեք գերմաններդ, դուք ասոր ճամբան կորցուցեր եք և Մահըմատի ճամբան բռներ եք։ Խնդալով ըսավ, շեյխ էֆ, ինչու՞ այդպես կասես մեր այս օրվան պատերազմը կրոնական չէ, այլ մյուլք, արարչի հողի խնդիր է, և օսմանցու հետը միացանք հող գրավելու համար։ Մենք օսման-

ցիներուն այդպես չինք ըսած հայերուն համար, ինչ որ ինք ըրավ[22]։

1917 մայիսի 10-րդ օրը, Սինճարեն երկու ձիավոր եզիտի և Աղրականցի Արամը և ես այս չորսս Սինճարեն դեպի Մուսուլ գնացինք Տեր Զավեն պատրիարքին տունը մտանք, այն օրերուն էր որ ամբողջ Թուրքին ուժը Մուսուլ էր։ Գնացինք այցելեցինք Զավեն պատրիարքին ու ըսի, եթե ինծի կընդունիս լսի ես քեզի ծառայություն մը պիտի ընեմ իբր կրոնական պարտականություն։ Պատրիարքը պատասխանեց, ես շնորհակալ եմ Քեզմե, բայց դուն ինչպես, ի՞նչ կերպով, ի՞նչ համարձակությամբ Սինճարեն մինչև հոս մեր տունը եկար։ Այց եկա քեզի համար, Քեզ աղատելու, ինչու որ հայերեն 1000-ը գնաց գոնե մեկը թող մնա, եկուր այս գիշեր Քեզ հետս Սինճար տանիմ, պահիմ Քեզ... Օսմանցիներեն ես լսած եմ, որ քեզ պիտի կախեն։ Պատրիարքը պատասխանեց։

—Տղաս ես քեզմե և Ձեր ամբողջ ազգեն շատ-շատ շնորհակալ եմ։ Ես արդեն լմնցած մարդ եմ, ինծի համար կախաղան ըլլա կամ ոչ կարևորություն չունի, ինչու որ ես իմ կյանքես ձեռք քաշած եմ, արդեն, թեպետև ամեն մարդու համար կյանքը քաղցր է, բայց ինծմե զատ 10000 հայ գաղթական կան Մուսուլ, եթե ես փախիմ ազատիմ մենակս վերջը ամբողջ հայերը սուրեն կանցնեն, թող որ ես ալ իրենց հետ մաշեցնեմ կյանքս։ Հովիւ քաջ զանձն իւր դնե ի վերայ ոչխարաց, ոչ թե Մուշեղին պես փախուստ տա ու իր ժողովուրդը կրակի մեջ թողե կիլիկյան ջարդին։ Մենակ ես կխընդրեմ քեզմե շեյխը, որ Ձեր քով գտնված հայերուն լավ մտիկ ըրեք, իբրև զիս պահած հղաք, և ողջ մնողին Ձեր լավությունը ու երախտիքը չպիտի մոռանամ։

Եզիտի Միրե Միրան միր Ապտի պեկ զատի միր շեյխ Իսմայիլ պեկ»։

(Վավերագրերի տակ դրված է արաբատառ և լատինատառ երկու կնիք—Կ. Զ.)

«Մեծ պատերազմի ընթացքին մեջ շատ մը հայեր եկան Սինճար լեռը և մենք շատ մը հայերու հետ տեսնվեցանք, մեծ քաջու-

---

22 Ինչպես վկայում է վավերագրերը, Շեյխ Իսմայիլի և գերմանական հրամանատարի միջև զրույց է տեղի ունեցել նաև իմպերիալիստական Գերմանիայի և Թուրքիայի քաղաքականության, ռազմական, տնտեսական կապերի և հատկապես հայկական կոտորածի մասին։ Շեյխ Իսմայիլը մեղադրել է կայզերական Գերմանիային հայկական կոտորածներին աջակցելու գործում։

թյուն և հայրենասիրություն ու ոգևորություն կպարունակեր Տ. Զավենի սուրբ պատրիարքին և փրոֆեսոր Խաչատրյանին սիրտերուն մեջ. առաջինը հավատարիմ իրեն ազգին ու կրոնքին քաջ հովիվի մը նման բնավ չի զատվեցավ իրեն հոտեն, միշտ քաջալերելով ու խրախուսելով զանոնք ցույց տալու համար անոնց ապագա երջանկությունը ու հանգստությունը, ան չէր ուզեր և չէր ալ մտածեր իր անձին վրա լոկ միշտ կըսեր «Ես և մանկունք իմ», թող ապաշխարենք, թող ոչնչանանք և կամ թող ապրենք միասին. կեցցե գաղափար, կեցցե անձնուրացություն, կեցցե և միշտ կեցցե Զավեն պատրիարք։ Իսկ Խաչատրյան Սինճարի ճիշտ պատերազմին որ մոտերնիս ապաստանած էր, իրեն ծերուկ վիճակին մեջ մեր բանակին գլուխը անցած ուղիներ կցուցաներ, քաջալերական խոսքերով բանակը դեպի առաջ կմղեր։ Օսմանյան տերության անկումը և անգլիական կառավարության տիրապետությունը կքարոզեր դարձյալ ինքն էր, որ հերոսաբար ազգին նվիրված ինծի հետ միասին արաբական ցնցոտիներով, թրքական արյունարբուն ճեղքելով սլացավ Պաղտատ. դեպի անգլ. բանակ կանչելու օգնության ազգին պաշտպանության։ Այժմ որ տեղս Պագուպա ապաստանած են 15,000 հայ և 30,000 ազգ ազատված են, Ուրմիայի Պաղի աշիրաթեն, հին ազնվական ցեղերին որ հնուց ի վեր Ուրմիայի քաղաքը կբնակեին ասորի ազգն Աղա Պետրոս փաշայի և հայերն ալ պարոն Լևոն Շաղոյան փաշայի շնորհիվ ազատված են, ինչու որ հիշյալ երկուքը իրենց առաջնորդներ եղած են։ Մեր սահմանը ու ասորիներուն մեկ է իրավ որ իրար լավ գիտենք շատ ժամանակ առաջ մեջերնին Աղա Փթոռզին նման հրամանատար մը չի եկած դուրս և Իրաքի մեջ գտնված աշիրը և ժողովուրդը ապշած մնացին տեսնելով և լսելով այս երկու անձնվեր ու քաջ առաջնորդներու ըրած ճարպկությունը և հրամանատարությունը, որ կարողացեր են 50.000 անձ ազատելու, Անգ. բանակ ապաստաներ են և վստահ եղեք որ Օսմ. կառավարության մեջ գտնված ոչ մահմեդականները բնավ երբեք ասոնց նման շատ և գույքերով ազատողներ չեն եղած։

Այսչափ երկար գրելնուս ներողամիտ կըլլաք, ինչու որ երկար տարիներ ի վեր է, որ իրարմե տեղեկություն չունեինք և իմ պարտականությունս Ձեզի իմացնել ամբողջ եղելությունը ու կխնդրիմ, որ դուք այլ այսպես երկար գրելով մեզի գիտցնեք ամեն ինչ, ինչու որ մենք Ձեր եղիտի և հայ ազգին կարոտը կքաշինք։

Դարձյալ կխնդրեինք, որ այս գրածներս ամբողջ եզիտի և հայ ժողովրդին կարդաք, կամ իրենց տաք որ կարդան։

Գրեց Սարգիս Ֆարշյան պաղտատեն[23]։

1916 հոկտ. 1 -ին, նոյ. 6-ին»։

Վերոհիշյալ ծավալուն վավերագրերը, նրանցից զատ եղած բազում փաստաթղթերը, գրողների ու հրապարակախոսների հոդվածներն ու նոթագրությունները աներկբայելի են դարձնում հայ և քուրդ ժողովուրդների տնտեսական-քաղաքական ու մշակութային առնչությունները, որոնք մերթ խաղաղվում էին, մերթ էլ փայլատակում զինակցական կապերով՝ ուղղված օսմանյան կայսրության վարած ազգահալած ու ջարդարարական քաղաքականության դեմ։ Միշտ չէ, որ քուրդ վերնախավը հասկացել է հայ-քրդական զինակցական կապերի ժողովրդապաշտպան, անփոխարինելի անհրաժեշտությունը։ Սակայն ժողովուրդը, նրա լուսավոր, խորիմաստ առաջնորդներից շատերը անցնելով 1890-ական թվականներին Համիդ II-ի կողմից կազմակերպված ջարդարարական քաղաքականության բոցով, ճաշակելով երիտթուրքերի խաբեական քաղաքականության դառը պտուղները, առաջին համաշխարհային ծանր ու անմոռաց տարիներին ելքի ուրույն ճանապարհներ էր փնտրում։

Հայ ժողովրդի զանգվածային կոտորածների օրերին, եթե որոշ ռեակցիոն քուրդ բեկեր գործիք դարձած երիտթուրքերի ու գերմանացիների ձեռքին, ապա բոլոր եզիդիները, Դերսիմի, Մոկսի, Շատախի, Սինջար լեռնագավառի քուրդ բնակչությունը, սեփական կյանքը վտանգի ենթարկելով պաշտպանեց և արյան ու հրդեհի կրակներից հանելով կենդանի ու ապահով դարձրեց տասնյակ հազարավոր անպաշտպան հայերի կյանքը։ Նա ոչ միայն պահում ու պաշտպանում էր հայերին, այլ մտահոգվում էր, իր առաջավոր մտավորականների միջոցով բանակցություններ վարում հայ քաղաքական գործիչների հետ, իրենց հետագա նպատակները իրականացնելու համար։ Բերված վավերագրերի ուղղությամբ շարունակվող պրպտումները նոր ու վառ էջերով կլրացնեն հայ ու քուրդ ժողովուրդների բարեկամության պատմությունը, որն այսօր ունի ոչ միայն գիտական կարևորություն, այլև քաղաքական կենսունակություն։

---

[23] Սարգիս Ֆարշյանը շեխ Իսմայիլի հավատարիմներից էր և հավանական է շեյխ Իսմայիլի խնդրանքով էլ նա գրել է այս նամակը։ Նամակի վերջում կրկին գրված է արաբատառ և լատինատառ գրով գրված շեյխ Իսմայիլի կնիքը։

К. А. ЧАЧАНИ

ЦЕННЫЕ ДОКУМЕНТЫ ОБ АРМЯНО-КУРДСКИХ ВЗАИМООТНОШЕНИЯХ

Резюме

Армяно-курдские отношения являются одной из интереснейших и в то же время мало изученных областей курдской истории. Особенно неблагополучно обстояло дело с привлечением документальных данных при освещении этого вопроса. Между тем, подобных документов огромное множество. В частности, в Матенадаране нами обнаружена целая серия документов о дружеских связях армянского и курдского народов. Из этой серии особый интерес представляют три документа о поездке в Закавказье духовного главы всех иезидов Шейх Исмаила в 1908 г., его встречах с наместником кавказским, католикосом всех армян и представителями армянской общественности, имевших целью укрепить связь курдов-иезидов с Россией и армянами и побудить последних открыть школы для курдов; не меньший интерес представляют относящиеся к 1916—1918 гг. обращения Шейх Исмаила к курдам-иезидам и армянам укреплять дружбу и сотрудничество между ними в борьбе против турецких колонизаторов. В них приводятся интересные данные о совместной борьбе этих народов против турецких угнетателей.